

Անյուշութեան ոլորտներուն  
 Միգամածին մէջ կորսըւած՝  
 Դուն՝ ծաղիկներ ցնծութեան  
 Նըշուլեցիր յեղակարծ,  
 Զոգւոյս մէկ փըլուզակին վերեւ,  
 Զինաւորոց որմի մը բացատքէն:  
 Մահի՛կ ոսկեսար, այս գիշեր նորէն,  
 Մէկ լուսեղէն վայրկեանով,  
 Տարագրեցիր հոգւոյս մըռայլն համօրէն:  
 Օ՛հ, աս ի՛նչ ճախրանք, օ՛հ, աս ի՛նչ գորով,  
 Այս գիշեր, նորէն,  
 Պատուհանես ներս սահեցար յուլօրէն.  
 Շօշափեցիր վարագոյրներն ըսպիտակ,  
 Եւ աշտանակն արոյրե,  
 Եւ հայլիին մէջ վառեցիր նոր ճըրագ:  
 Եւ ամէն մէկ հըպումիդ  
 Զոգի՛ս էր որ ինկաւ լազուարթ ձեռքիդ տակ:  
 Ներե՛, ա՛հ, ներե՛,  
 Որ վայրկեան մը վերջ, հիմակ,  
 Սեղանին վրայ նիւթ լամպարս եմ վառեր,  
 Ըսելու համար թէ թեզ չե՛մ մոռնար, թէ թեզ չե՛մ մոռցեր...

### 33. Ի՛ՆՉ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՄԲ...

*Գեղամ Բարսեղեան բարեկամիս*

Ի՛նչ արբեցութեամբ, ծառեր, լոյսին մէջ,  
 Ծառեր հովին մէջ եւ անձրեւներուն,  
 Վարսաւոր ծառեր, ծառեր երկնուղէշ,  
 Ու ծառեր մատաղ՝ ծովածուփ կանանչ  
 Տորենի ցանքին գոգն ինկած շուարուն՝  
 Ամէնն ալ կեանքին կ'ըմպեն յորդ ճաճանչ:  
 Ի՛նչ արբեցութեամբ խոտն՝ որ հողէն վեր  
 Կ'ելլէ, ըզմայր՛ն՝ կը բանայ լոյսին՝  
 Վայրկեան մը ապրող իր ցօղէ աչքեր:  
 Ի՛նչ արբեցութեամբ ծաղիկներ շաղին,  
 Ծաղիկներ լոյսին, մըտերիմ ձեռքին,  
 Ըսպասումներուն մէջ կը նըւաղին:  
 Ի՛նչ արբեցութեամբ ամէնմէկ արօտ,